ակրութեան վերաբերեալ երբոր բոլոր ազգին կողմանէ կը կատարուի ։ Բայց է որ Զինաց ինքնակալը այնպէս մեծ և պատկառելի կ'երևնայ իր ժողովրդեա-նը, և այս բանիս համար իրաւամբ պէտք է որ ամենայն Թագաւորաց նախանձելի ըլլայ ։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Պունեաւթ Սեբաստացի բժշկին խրատները ։

ՀԻՒԱՆԴԻՆ Աստուած է դեղ՝ որ մահու է տէր և կենաց .
Օհէքիմըն սէպէպ ասեն , խելօքաց է բանս ասացած ,
Թէ զԳալինոսն [1] ասեն և զԼօխման [2] բազմաց վըկայած .
Հրամանն 'ի վերուստ պիտի որ օգնէ՝ բժիշկըն գտած ։

Բայց որ զարհեստըս նախատեն իբր անպիտան ,
Եւ ոմ̃ք յիմար մըտօք սըմին ծանօթացան ,
Նոյնք իմաստուն զանձն և ներհուն համարեցան ,
Ըզտեսութիւն մըտաց ունին յոյժ յաղթական ,

Եւ 'ի գըրոց իմաստութեանց ոչ վարժեցան ,
Եւ ոչ 'ի սպառ ժուժկալեցին 'ի կէտ ուսման .
Այլ մանաւանդ ուսումնականքս որ այժմըս կան .
Եւ 'ի յինքեանց յանձնէ առնեն դեղ անպիտան .

Կամ 'ի ցաւոցն են անծանօթ և անհմտական .
Եւ զստածուսն ոչ ճանաչեն և ոչ ըզգան .
Աշակերտաց կարգէ լինին փախստական ,
Բըժիշկ անուամբ են և շրջին յոյժ պերճական ։

Իսկ որ Թիւրեալ բանիւ խօսին սըխալական ,
Եւ զոր առնեն ոչ կատարի ճշմարտաբան .
Ոչ զի արհեստն է անկատար և Թիւրաբան ,
Այլ որ կարծեօք զանձնէ ասեն գիտնողական ,

Մի՛ այլասեռ ազգաց լեզւի խնդրող ուսման ,
Մի՛ աղքատաց մեծամըտիր որպէս իշխան .
Այլ առ 'ի քեզ որպէս 'ի փըշոց վարդ հոտեան ,
Եթէ անօթ շնորհաց տեսցես և պատուական ։

Այլ ես Պունեաւթ Սեբաստացի բժիշկ անուամբ ,
Որ 'ի յարհեստս իմ աշխատեր մեծաւ տենչմամբ .
Ձեզ աղաչեմ ով դ̃ք կարդայք սակաւ զայս բան .
Զ՛իս զանարժանս հայր մեղայի առնէք արժան ։

[1] Գաղենոս անուանի Յոյն բժիշկը երկրորդ դարուն մէջ ։
[2] Լօքման, Արաբացւոց հին խիկարն կամ առակախօսն է ։